**Борисо-глебский сборник. Collectianea Borisoglebica, Выпуск I / Редактор Константин Цукерман, Paris, ACHCbyz, 2009 (Occasional Monographs-II / published by the Ukrainian National Committee for Byzantine Studies, Honorary President Ihor Ševčenko, President Petro Tolochko), p. 369.**

Բորիս-գլեբյան վարքի եւ պատմական միջավայրի ուսումնասիրության հետազոտական խնդիրները արդեն մի քանի դար զբաղեցնում են սլավոնագետներին, բյուզանդագետներին, ինչպես նաեւ հայագետներին: Այդ իսկ պատճառով 2008 թ. ապրիլի 11-12-ին Էրմիտաժում (Սանկտ Պետերբուրգ) գումարվեց գիտաժողով, որին մասնակցում էին գիտնականներ Ռուսաստանից, Ուկրաինայից, Ֆրանսիայից եւ Հայաստանից:

Ներկա ժողովածուն ներառում է այդ գիտաժողովում ընթերցված զեկուցումներից մի քանիսը: Մյուս զեկուցումները նախատեսվում է լույս ընծայել հաջորդ հատորներում: Ժողովածուի խմբագիր Կոստանդին Ցուկերմանը եւ հետազոտությունների հեղինակները անդրադարձել են խնդրին պատմաբանասիրական տեսանկյունից, նորովի մեկնաբանել Բորիսի եւ Գլեբի պաշտամունքի հետ կապված միջնադարագիտական հարցադրումները եւ սրբախոսական ու պատմագրական մատենագրության հետ կապված աղբյուրագիտական, հնագիտական լուծումները:

Քաղաքը, որից սկիզբ է առել սլավոնական եկեղեցում Բորիսի եւ Գլեբի պաշտամունքը, Կիեւից 20 կմ հյուսիս-արեւմուտքում գտնվող Վիշգորոդն է: Այդ քաղաքի հնագիտական հետազոտությունների արդյունքներն է հրապարակել Վլադիմիր Զոցենկոն (Կիեւ) «Հին ռուսական Վիշգորոդ. պատմահնագիտական ակնարկ» (էջ 16-56) վերնագրով: Հեղինակն անդրադարձել է քաղաքի պատմությանը վերաբերող գրականությանը, տարբեր հնագիտական հետազոտությունների եզրակացություններին, պատմագրական գրականության մեջ արծարծված կարծիքներին: Հետազոտողը մանրամասնել է քաղաքի տեղագրությունը, քաղաքը շրջապատող ամրությունների, կենցաղային շինությունների առանձնահատկությունները: Հնագիտական գտածոների մեջ արժեւորվել են Սվյատոպոլկի (հայտնաբերված 1936 թ.), միշարք այլ կիեւյան իշխանների կնիքները, 1015 թ. Բորիսի եւ Գլեբի գերեզմանատեղ ծառայած նախնական փայտաշեն եկեղեցին եւ հետագայում կառուցված մյուս տաճարները, որոնք մեծ դեր են խաղացել հիշյալ վկաների սրբացման գործում: Հնագետն անդրադարձել է նաեւ քաղաքի ամրություններին եւ այլ շինություններին, որոնք էական դեր են խաղացել քաղաքի պաշտպանության գործում, խոսել է արհեստավորների (դարբիններ, երկաթագործներ, բրուտներ, ապակեգործներ, ոսկերիչներ) եւ վերնախավի զբաղեցրած թաղամասերի տեղադրության ու դրանք միմեանց կապող փողոցների ցանցի մասին: Գտնված հնագիտական նյութերը խոսում են Վիշգորոդում ծաղկող արհեստների եւ Սկանդինավիայի, Մերձավոր Արեւելքի, Բյուզանդիայի ու քաղաքին հարեւան գավառների հետ մեծածավալ առեւտրի մասին. այդ են վկայում նաեւ հայտնաբերված դրամները (հիմնականում հյուսիսեւրոպական) եւ եկեղեցական սպասքը:

Սրբախոսական թեմատիկան սերտորեն առնչվում է մանրանկարչության եւ պատկերագրության խնդիրների հետ, որոնց անդրադառնում են Էնգելինա Սմիրնովան (Մոսկվա) «Սուրբ Բորիս եւ Գլեբ իշխանների պատկերագրության առաջին փուլը. բյուզանդական օրինակների խնդիրը եւ ռուսական ավանդույթի ձեւավորումը» (էջ 57-116), Ելենա Ուխանովան (Մոսկվա) «Սուրբ Բորիս իշխանի հնագույն պատկերները. Վլադիմիր Մոնոմախի գրադարանի պատմությունից» (էջ 117-156) եւ Ելիզավետա Արխիպովան (Կիեւ) «Թամանի քարե սրբապատկերը սուրբ զինվոր-նահատակ Գլեբի պատկերով» (էջ 157-182): Արվեստաբան հեղինակները մշակութային լայն կտավի վրա վերականգնում են հիշված սրբերի պատկերագրման վաղագույն փուլերը, անդրադառնում սուրբ իշխանների սրբապատկերների վերակազմությանը եւ առաջին հիշատակություններին, կերպարների ստեղծման ավանդույթին (Նովգորոդի մոտակայքի սաբա-վիշերյան վանքի սրբապատկեր, ԺԳ դ., Նովգորոդի Զվերինա վանքի սրբապատկեր, ԺԴ դ., Ռյազանի թանգարան, քարի վրա պատկեր,ԺԳ դ. ), հագուստների մանրամասներին (մորթե գլխարկներ, թիկնոց-մուշտակ եւն.), սրերի եւ խաչերի յուրահատկություններին, տարիքային առանձնահատկություններ բնորոշող մազերի կտրվածքներին, որոնք սերում են սկանդինավյան ավանդույթի վրա ձեւավորված ռուսական գեղարվեստական մտածողությունից: Ավելի ուշ շրջանի սրբապատկերներում Բորիսի եւ Գլեբի հետ պատկերվում է նաեւ նրանց սրբացված հայրը՝ Վլադիմիրը: Ընդգծվում է, որ երկվորյակ սրբերի պատկերագրությունը զուգահեռներ ունի բյուզանդական Կոզմա եւ Դամիանոս, Ֆլորինոս եւ Լավր սրբերի պատկերագրական ավանդույթի հետ: Սմիրնովան անդրադառնում է նաեւ իկոնոգրաֆիկ պատկերների արմատավորման նախնական փուլին, կնիքների եւ քարե սալիկի վրա պահպանված պատկերներին, սլավոնագիտության մեջ հակասական բացատրություններ ստացած վաղագույն մանրանկարներին (ГИМ, Син. 262, Лист 1 об.; ГИМ, Чуд. 12. Лист об.), ԺԱ/ԺԲ դ. թալիսմանատիպ խաչերին (enkolpion), սրբերի ափի մեջ պատկերված ճարտարապետական կառույցներին: Ժբ դարի երկրորդ կեսից եւ ԺԳ դարի առաջին քառորդից Ռուսաստանի տարբեր վայրերից գտնվել են տարատեսակ թանկարժեք քարերով զարդարված ոսկերչական իրեր եւ էմալե սկավառակների վրա աշխատանքներ, որմնանկարներ, եկեղեցիների քանդակած եզրազարդեր, որոնք Սմիռնովան համեմատում բյուզանդական, վրացական, չեխական, սերբական եւ սկանդինավյան արվեստի նմուշների հետ: Ուխանովան մանրամասն արվեստաբանական քննության է ենթարկում Син. 262 եւ Чуд. 12 մանրանկարները, որոնք Ա. Ի. Սոբոլեւսկին ժամանակին համարում էր Ռոստովյան գրչության դպրոցի արտադրանք՝ շեշտելով դրանց կապը բուլղարական պատկերագրական նախատիպերի հետ: Արվեստաբանուհի-բնագրագետ-հնագրագետը իր նոր հմտալի վերլուծություններով dրանք կապում է կիեւյան դպրոցի եւ Վլադիմիր Մոնոմախ իշխանի մշակութային գործունեության հետ, բյուզանդական արվեստի այլ օրինակներով հաստատագրելով սեփական կարծիքը: Արխիպովան անդրադառնալով քարի վրա փորագրված սուրբ զինվորների պատկերներին՝ մեկ առ մեկ հետազոտում Սուրբ Գլեբին եւ Բորիսին նախամոնղոլական շրջանին վերաբերող հնագիտական բոլոր նմանատիպ (սրբապատկերներ, թալիսմաններ, պահպանակներ, կնիքներ) գտածոները:

Ռուս մատենագրության հնագույն պատմագրական՝ "Повесть Временных лет" (ПВЛ) ժողովածուի բնագրագիտական քննությանն է նվիրված Կոստանդին Ցուկերմանի (Փարիզ) «Դիտարկումներ Ժամանակագրության հնագույն սկզբնաղբյուրների շերտերի մասին» հոդվածը (էջ 183-305), ուր հեղինակը մանրամասն քնութագրում է վաղագույն՝ 1016 / 17 թ. թվագրվող շերտը, անդրադառնում բորիս-գլեբյան պատմությունների (Նեստորյան Ընթերցում, Պատմագրույց) հարաբերակցությանը ռուս հնագույն ժամանակագրության բնագրին եւ եզրակացնում, որ վաղագույն հիշատակությունները արդեն եղել են այդ շերտում, իրադարձությունների շարադրանքի հորձանուտում, առանց սրբախոսական երանգների: Հեղինակն անդրադառնում է այդ բնագրեր թափանցած բազմաթիվ հավելումների ժամանակագրությանը, դրանց մի մասը կապելում սկանդինավական սագաներից կախման մեջ գտնվող մոտիվների հետ, որոնք թվագրում է 1070-ական թվականներով: Այնուհետեւ նա փորձում է վերականգնել 1016-1024 թթ. Ռուսաստանի պատմության ժամանակագրության համապեղելիությունը մատենագրական տեղեկությունների եւ դրամագիտական գտածոների հետ, համեմատում երկու նովգորոդյան ժամանակագրությունների (Н1Л мл.; Н1Л ст) համապատասխան հատվածները՝ երկրորդը համարելով առաջինի ընդարձակ տարբերակը: Քննվում է բորիս-գլեբյան պատմության **սրբախոսական** ընթերցման (Паримийные чтения) եւ ժամանակագրական (ПВЛ) տարբերակի սկզբնաղբյուրներից մեկի (Н1Л мл.) բնագրական հարաբերակցության խնդիրը, դրանց առնչությունը Ամարտոլի պատմության սլավոնական թարգմանության հետ: Այնուհետեւ, կենտրոնանալով ПВЛ ժողովածուի նախնական շերտերի եւ մեզ հասած բնագրի կազմավորման փուլերի վրա, փորձելով խմբագրել Շախմատովի եւ մերօրյա սլավոնագետ-բնագրագետների կառուցումները՝ Ցուկերմանը ճշգրտում է ժամանակագրության տարբեր հատվածների ստեղծման հերթականությունը (1016/7 թ., 1076 թ. եւ ԺԳ դարի սկիզբ), փորձում հստակեցնել կիեւյան եւ նովգորոդյան ժամանակագրական ավանդութների հետքերն ու դրանց կապը ռուսական վանական դպրոցների հետ:

Լարիսա Սոբոլեւան (Եկատերինբուրգ) «Բորիսի եւ Գլեբի սրբության մարմնավորումը հոգեւոր բանաստեղծության մեջ» (էջ 307-339) հետազոտությամբ անդրադառնում է ռուսական հնածեսերի շրջանում (старообрядческая среда) տարածված բնագրերի երեք խմբագրություններին, ժողովրդական բիլինայի այս տեսակի ժանրային յուրահատկություններին: Հեղինակը եզրակացնում է, որ բորիս-գլեբյան հոգեւոր երգերի հիմքում ընկած է նեստորյան պատմագրույցը, որն ունեցել է թե բանահյուսական եւ թե ձեռագրական ավանդույթ, որոնցից կարեւորները հոդվածի հեղինակը հրապարակում է զուգահեռաբար: Վադիմ Արխիպովի (Կիեւ) ««Ավագության» պատմագրական գործառույթը Բորիսի եւ Գլեբի տարեգրային պատմվածքում» (էջ 341-352) հոդվածն անդրադառնում է ռուսական իշխանի օրինականության խնդրի պատմագրական եւ բանասիրական մի շարք ասպեկտների: Ժողովածուի այս հատորն ավարտվում է Սերգեյ Իվանովի «Մի քանի նկատառումներ բորիսգլեբյան պաշտամունքի բյուզանդական համատեքստի մասին» (էջ 353-364) հոդվածով, ուր հեղինակը զուգահեռներ է անցկացնում Նիկիֆոր Բ Փոկա կայսեր սրբացման խնդիրների շուրջ, ներկայացնում է Բյուզանդական կայսրության

մեջ ռուս իշխանազունների հիշատակի հարգմանը վերաբերող տեղեկություններին (Կ.Պոլսի եկեղեցին, Սուզդալյայի հունական Հայսմավուրք), սլավոնական բնագրում առկա հունաբանություններին եւ բյուզանդական մատենագրության տարբեր երկերի հետ առնչություններին:

Պիտի ավելացնել, որ ժողովածուն տպագրված է ճաշակով եւ տպագրական արվեստի բոլոր կանոններով: Ժողովածուն հետաքրքիր ներդրում է սլավոնագիտության եւ սրբախոսական գրականության հետազոտության ասպարեզում: Հաջորդ հատորներում սպասվում է նաեւ Բորիսի եւ Գլեբի վարքի հայերեն միջնադարյան թարգմանության գիտական բնագրի հրապարակումը, ինչպես՝ բնագրագիտական ու պատմաբանասիրական պարարնույթ հետազոտություններ:

ԱԶԱՏ ԲՈԶՈՅԱՆ
Պատմական գիտ. դոկտոր